Դաստիարակների վերապատրաստման մասին
Դեկտեմբերյան երկշաբաթյա նախադպրոցական հաստատության աշխատողների վերապատրաստումները համակարգել եմ Արևելյան դպրոց-պարտեզում՝ ըստ հրապարակված մոդուլների: Այն ինչ լավ էր՝ լավ էր. մասնակիցների աշխատանքը կենդանի-գործող միջավայրում՝ իր առավելություններով ու հարցերով, որոնք հենց տեղում են ստանում պատասխան:
ՄԻ քանի նկատառումներ
Այս շաբաթների աշխատաքը ցույց տվեց, որ վերապատրաստումների համակարգողը տարբերակը արդյունավետ է, ավելի քիչ է լարումը: Չնայած որ ես համակարգել եմ օգոստոսյան վերապատրաստումները(ուստարվա սկիզբ, ընդունելություն և այլն), բայց այդքան չեմ լարվել, ինչքան՝ դեկտեմբերյանը, իսկ լարումը՝ լավ բան չէ: Ինչ եմ հասկանում համակարգող ասելով

1. Պատասխանատու է ամեն ինչի համար (ընդունելությունից մինչև ճանապարհում)
2. Բովադակության հետ կապված պատասխանատուների հետ փոքր քննարկումներ. ո՞վ ինչ է անում, ո՞վ ում է շարունակում, որ արդյունքում միասնական ծրագիր ստացվի՝ Իմացումի հրճվանքի մոդելը երևա:
3. Կլոր սեղանների ամենօրյա բովանդակությունը վերնագիր ունենա...